թակիչը հատուկ պարկի մեջ զետեղած[107]։ Ջաֆավ զարնելով հանէղին լարը թրթռացնում էին և լարը մոտեցնելով բրդին՝ վերջինս գզվում էր։ Գզարանէրն էին նաև ֆիշա հաուղնէր։ Բարձրանում էին կրտէրը՝ կտուրը, բուրդն ուզած գույներով փռում կարպետի վրա և փէտի իրա շինած՝ բարակ գերանի վրա փաթաթած ու կապած տաք ջուր շաղ ըն տամ և ֆացի տալով կլորում՝ գլորում մի կողմից մյուսը, մինչև որ թաղիքը պատրաստ էր լինում։

* *
*

Թել մանելը։ Մանելուց առաջ ֆոլէրն երկրորդ անգամ գզում են և մալանչ ըն անում՝ ավելի փոքր գնդերի վերածում, որ մանելու համար հարմար լինի։

Թել մանելու համար Գորիսի շրջանում առհասարակ ազատ իլիկին, թէշիին, վոստին գրեթե չէին դիմում։ Այսպիսի իլիկով պատահում էր, որ մանում էին մետաքսը կամ շատ բարակ բուրդը կամ կոշտ դազիլը՝ այծի մազը։ Վերջինս շվանի՝ պարանի և սիջիմի[108] համար, բայց այս նյութերն էլ մանում էին լոխ շրխարակավ՝ ճախարակով, որի օգնությամբ ստանում էին ուզած բարակության և ոլորման աստիճանի թել, նայած թե ինչի համար էր գործածվելու—գորգի, շալի, գուլպայի և այլն։ Ճախարակի ձևը՝ հայաբնակ և հարևան գավառներում տարածված սովորական ձևն էր, միայն թե մասերն ունեին տեղական անուններ։ Ամբողջական մեկ փայտից շինած անիվը, որին հաճախակի պատահում ենք անտառաշատ Լոռիում, այստեղ չկա։ Թոփի՝ հաստ առանցքակալի վրա, որի միջով անց է կացվում նէտը[109] կամ օխը[110], աջ և ձախ կողմից նստեցրած են թէվէրը, որոնք կազմված են խաչաձև իրար վրա դրած ութանման բարակ տախտակներից։

Սրանց վերին և ստորին եզրերի ատամների արանքներով անցկացրած բրդե փառէրավ՝ թելերով երկու թէվէրն իրար հետ միացված են։ Այս թելացանցը կազմում է անիվի շրջի երեսը։

Փառէրի վրայով փաթաթված կուպրած թելով՝ ֆողավ թոփի պտտվելը փոխադրվում է իլիկին։

Թոփն իր թէվէրավ, թեք վոտնէրավ հաստատված է տակի տախտի վրա։

Իլիկն անց է կացրած իլիկի մստնէրի[111] կամ վոտունէրի[112] ծակերով, ունի

---

107 Շատախի և Մոկսի գավառներում՝ գզրարության վարպետներ են ոգմեցիք։ Շատախի հարավային Ոգմի գյուղի այս բնակիչներին կարելի էր հանդիպել մերձավոր բոլոր գավառներում՝ մինչև Վան, Խիզան, Կարճկան և ավելի հեռու։ Նույն արհեստով նրանք պարապում էին Երևանում այնտեղ գաղթելուց հետո։ Թաղիքագործությունն առանձնապես ընդունելի է թուրքերի մեջ, որոնք այդ արհեստը բերել էին իրենց հետ ասիական ներքին տափաստաններից, որտեղ վրանները մինչև այսօր էլ ծածկվում են նուրբ և գեղարվեստորեն ձևավորված թաղիքներով, երբեմն երկտակ։ Գորգագործությունը թուրքերի մեջ արագ զարգացավ դեպի Իրան և Անդրկովկաս գաղթելուց հետո, գլխավորապես տեղական ժողովրդից առած՝ կանանց միջոցով։ Այն մեծ տարածում ստացավ քոչվոր տնտեսության մեջ, գորգերի, կարպետների, մաֆրաշների գործածության հարմարության պատճառով՝ սար բարձրանալու և իջնելու ժամանակ, մանավանդ, որ խաշնարածությունը դրա համար առատ հումք էր տալիս։

108 Սիջիմ—բարակ պարան, հմմտ. թրք sicim—веревочка, шнурок, бечевка.

109 Գորիս, Խնձորեսկ։

110 Բռնակոթ։

111 Բռնակոթ։

112 Արծվանիկ։ Բեխում՝ վրէննէրի։